

ՄԵԾ ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉՈՎ



«Ես մինչեւ այսօր ալ երջանիկ եմ իմ
որոշմամբ,
ես եկած եմ իմ մեծ կարօտի կանչով»
Սեդա Տաճատի Օհանեան

2022 թ.-ի Յունիսին կը լրանայ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի Սփիւռքի եւ հայկական գաղթավայրերու պատմութեան բաժինի գիտաշխատող Սեդա Տաճատի Օհանեանի ծննդեան ութսուն ամեակը:

Օհանեան ծնած է Պասրա՝ 5.06.1942 թ.-ին: Վասպուրականցի գրատենչ եւ հայրենանուէր ընտանիքի մէջ հասակ առած Սեդան՝ նախնական ուսումը կը ստանայ Պասրայի Հայ Ազգային Վարժարանէն, երկրորդականը՝ տեղական, իսկ բարձրագոյնը՝ գիշերօթիկ ուսումնական հաստատութենէն: Կեանքի պայմաններու բերումով, հարկադրուած կ'աշխատի Նաւային Ապահովագրական ընկերութեան մէջ: Ուսման եւ աշխատանքին կողքին Օհանեան գործօն մասնակցութիւն կը բերէ համայնքային հասարակական կեանքէն ներս, ինչպէս՝ Պասրայի Հայ Կարօտելոց Խնամակալութեան, Պասրայի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան (ՀԵԵՄ) աշխատանքներուն:

Որոշ ժամանակ անց, Օհանեան Պասրայէն կը տեղափոխուի Պաղտատ. կ'անդամակցի Պաղտատի ՀԵԵՄ-ի գիտական եւ մշակութային յանձնախումբին եւ անոր հրատարակած «Լրատու» պարբերաբերթի խմբագրակազմին, իսկ 2000–2004՝ առաջնորդարանի «Կանթեղ»-ին:

Իր ամուսնոյն եւ մօր մահէն ետք, այլեւս ոչինչ զինք կը քաջալերէր կեանքը շարունակել իր ծննդավայրին մէջ: Ուստի, Սեդա Օհանեան հայեացքը վերջնականապէս կ'ուղղէ իր եւ ամուսնոյն երազանքներու Հայրենիք՝ Հայաստան, որ ամէն սփիւռքահայու երազանքն է նաեւ:

2004-ին կը հաստատուի Հայաստանի Հանրապետութիւն (Երեւան): Ան կը շարունակէ իր ուսումը՝ հայոց պատմութեան մասնագիտութեամբ, եւ 2011-ին կը ստանայ մագիստրոսական վկայականը, իսկ 2015-ին պաշտպանելով թեկնածուական ատենախօսութիւնը, կ'արժանանայ պատմական գի-

Մեծ կարոտի կանչով

տուրքիններու թեկնածուի կոչումին: Մինչ օրս Սեդան կը շարունակէ իր գիտահետազոտական աշխատանքը՝ նոյն հիմնարկի Սփիւռքի եւ հայկական գաղթավայրերու պատմութեան բաժինէն ներս:

Սեդա Օհանեանի ուսումնասիրութեան գլխաւոր առանցքը Իրաքի հայ համայնքի տարբեր ժամանակներու կրթամշակութային, քաղաքատնտեսական եւ թեմական պատմութեան ուսումնասիրութիւնն է, բայց լեզուներու իմացութիւնը հնարաւորութիւն ընձեռած է աւելին ընծայելու գիտական հանրութեան:

Սեդան հեղինակ է մէկ տասնեակէ աւելի գիտական յօդուածներու. մասնակցած է միջազգային գիտաժողովներու: Իր համայնքի վերաբերող մենագրութիւնները կը կրեն «*Իրաքի հայ համայնքը 20-րդ դարուն (2016)*» եւ «*Միջագետք (Իրաք)ի գաղթօճախը վաղնջական ժամանակներէն մինչեւ XX դար (2020)*» խորագիրները, որոնցմէ առաջինը Իրաքի հայոց թեմի նիւթաբարոյական աջակցութեամբ թարգմանուած եւ լոյս տեսած է արաբերէն լեզուով: Աշխատութիւնները (մենագրութիւններ եւ յօդուածներ) նուիրուած են Միջագետք(Իրաքի) տարածքին հնագույն ժամանակներէն հայերու եւ հայկական բնակավայրերու գոյութեան եւ յատկապէս միջին դարերէն մինչեւ քսաներորդ դար ինկած ժամանակահատուածին ձեւաւորուած՝ Իրաքի հայ գաղթօճախի պատմութեան: Սեդան բարեխղճօրէն ուսումնասիրած է յետեղեռնեան շրջանի հայերու տեղաբաշխումը Իրաքի տարածքին, Իրաք հասնող եւ Իրաքէն այլ շրջաններ տեղափոխուող հայ եւ ասորի ժողովուրդներու տեղաշարժերը, կատարուած որբահաւաքի աշխատանքները, հայապահպանութեան նպաստող ազդակներու կառուցողական աշխատանքները՝ դպրոց եւ եկեղեցի: Յօդուածներու եւ մենագրութիւններուն մէջ մանրամասն ներկայացուած են Միջագետքի հայկական բնակավայրերու սկզբնաւորումը եւ ձեւաւորման նախադրեալները, միջին դարերէն մինչեւ XX դար, ապա հայ գաղթավայրի կազմաւորումը, իրաքահայ թեմերու (առաքելական, կաթողիկէ) սկզբնաւորումը, տնտեսական ու հասարակական կեանքը եւ այլն: Արժեւորած է Հայ Առաքելական եւ Հայ Կաթողիկէ եկեղեցիներու դերը համայնքային կեանքէն ներս:

Ուսումնասիրութեան մէջ անդրադարձ կայ նաեւ, 1921–1924 թթ. եւ 1947 թուականներու զանգուածային եւ անհատական նախաձեռնութեամբ դէպի Հայրենիք ներգաղթողներու մասին:

Սեդա Օհանեանը, այսօր եւս, բծախնդրօրէն կը շարունակէ իր գիտահետազոտական աշխատանքը:

Ֆիշենկճեան Ա.

Ան հարցազրոյցներէն մէկուն այսպէս արտայայտուած է. «Հայաստանի գիտութիւններու ակադեմիան այսօր իմ երկրորդ տունն է. երախտապարտ եմ Պատմութեան ինստիտուտի տնօրէն, փրոֆէսոր Աշոտ Մելքոնեանին, իմ գիտական ղեկավար, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարեանին, Կարէն Խաչատրեանին եւ ... իմ կեանքիս, իմ ճակատագրիս ամենամեծ ու առաջին ուսուցիչներուս՝ ծնողներուս, որոնց դաստիարակութեան շնորհիւ այսօր ես այն եմ, ինչ կամ»:

**Շնորհաւոր ծնունդդ Սիրելի Սեդա:
Թող Աստուած առողջ օրեր պարգեւէ քեզի:**

ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ

պատմական գիտությունների թեկնածու
fishenkjianani@hotmail.com